

✓ q
350

ԳՆ 10

ՎԱՐԴԴԵՍ

HOMO HOMINI LUPUS

(ՄԱՐԴԸ ՄԱՐԴՈՒՆ ԳԱՅԼ)

ԶՊ 033

ՔՐՔԻՉՆԵՐ

ԱՐԵԿԵԼԵԱՆ ԱԶՈՏ ԲՈՂՈՑԵՎՈՒԹԻՒՆ

ԶՈՒԲՐԱՆԴԱ

ՀՊԱՏ. Հ. ՅԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

1909

4
350

9
350

9

HOMO HOMINI LUPUS

(ՄԱՐԴԻ ՄԱՐԴՈՒՆ ԳԱՅԼ.)

I

ՄԵՐԵՇ չի պատահել, որ ագարակում՝ բնակւող անօւիր պարտէզի մէջ թռպւած, վազվզի թիթեաների սելից, անցնի ցանկապատից, անդիտակցարար առաջ նույնը մտնի անսառի մէջ և մոլորի:

Այդպէս հէնց պատահեց անսառի մէջ գանւող մի պարակի մահաւկին։ Կէսօրից յետոց պարակը մտաւ առ զոհնգգոյն թիթեաները գրաւեցին նրան, պնդեց րանց ետեկից և թիթեաների հետ ցանկապատից դուրս դնաց։

Թփից թռւփի, ծաղկից ծաղիկ՝ հեռացան թիթեաները նուան անսառի խուքերը, մանուկն էլ նրանց ետեկից։ Երբուն ծաղկիներ այնքան կացին, որ չնկատեց էլ թէ ինչպէս անցել էր մի մեծ տարածութիւն և մոել էր մի անձանօթ տեղ։

Արեք մայր էր մտնում, երբ նա իրեն գտաւ խիստ



մացառներով՝ ծածկւած մի քալայրի կողքին։ Առջ
ժամ էր, մէջը փորւած, խի մուտքը ծառերով հայտ-
նաւորւած։

II

Քարայրում՝ բնակութիւն էր հասաւանել գայլի մի
բնասանիք, մի հայր, մի մայր և երկու ծագուհներ։
Չափուիներն էին ընտանիքի ուրախութիւնը, ին-
չե՛ր տուո չեխն սարքում այդ չարաձճները, գլորու-
ւում էին հողերի մէջ, կնձկնձում, իրար խածնում, ծի-
ծաղելի սուխւններ անում ժամերով։ Հայրն ու մայրը,
մի լու բնիթրից յետոյ նստում էին քարայրի տոշի
և զիտում էին իրենց լակունների խաղը։

— Հապա՛, Սամ, ցատկի՞ր, լո՛րձր, ձայնում էր հայ-
րը իր որդուն, և շո՛ւտ . . .

Եւ Սամը ցատկում էր, երկու սոները գետնից
կտրում, մարմինն ծուռ դիրք տալիս ու մկանունք-
ները ձգուում։ Բայց սրայնեաւ չառ չաղ էր, խոկոն
ցած էր գլորուում, կնձկնձում էր և գէ՛հ . . . ծիծաղիր
որբան կ'ուզե։

Խիկ Սիդը՝ Սամի նիշար քայրը, երբ եպայրն ընկ-
նում էր, վաղիզում էր նրա շուրջը, չարացնում նրան։

Առաւուներն առհասարակ, մէկ օր մայր-գույլը,
խիկ միւս օր հայրը, հերթով, գնում էին կերպուր
ճարելու։ Փառք Սամուծոյ, շատ էլ գժւար չեր լինում
աշխատանքը, ով գիտենայ աշխատել կարող է ուսի-
մք գտնել, գտնելի հասարակութեան մէջ իվեառ ու-
րիշների հարասութիւնը զիզող և սոները պարզած
պրատարութիւն անողներ չկային, այնպէս որ զրի-
ւող չեր լինում։ Շրջակայքում ապարակներ, անտա-
ռում սրեւր շնոր, հօֆ . . . մի ուշ կամ մի գու, մի

ՀՀ-414



350-29

ար բաւական էր ընտանիքի ամրագչ օրւայ ապրուստի
համար, աւելորդն ինչ էին անելու. միթէ բաւ չեր
կուշտ լինել և պահանջներին գոհացում առալ։

Հայր-գալլը, տանենք, մի քիչ մեծ ստամբս ունէր,
բայց աւելի էլ ուժեղ էր և ձարագիկ։ Դրա համար էլ,
կէսօրներից յետ ց երր քիչ քաղցածանում էր, մի քա-
նի ժամ գուրս էր զնում և թփերի տակ գտնում էր
ուտելու մի բան։

Զմեռը մօտ չեր գեռ, այնպէս որ գայլ բնասանիքը
երջանիկ օրեր էր անցկացնում խիստ անստափի խոր
գարսորի մէջ։

Բայց այդ օրը, երր ապարակի մանուկը մօտենում
էր քարայրին, սանսուտէր Սամհօնը գեռ չեր վերա-
գարձել իր կէսօրուայ պարտից, չնայելով որ մութր իջ-
նում էր անստափի մէջ։ Տիրուհին՝ Զէրը անհանգիստ
էր, շատ էլ ախորժ մնաքով չեր որ գիտում էր փոքրիկ-
ների խաղերն ու անհանգարա, սրասող ակնարիներ էր
ձգում քարայրի գամեն։

— Գէ՛հ, քիչ հանդարս, երեխայք, ձայնեց նու վեր-
ջապէս, լսեցե՛ք, տեսնենք հայրիկը չի՞ գալիս։

Ուղին ու Սամը վաղեցին զէսի գուսրը։ Տեսնենք
հայրիկը չի՞ գալիս, սասց Սիդը։ Տեսնենք, կրկնեց
Սամը։

Ինչ տուել կ'ուզի որ վաղելու մէջ Սամը ևս մնաց
ո՛չ միայն ետ մնաց, այլ և երկու անգամ էլ գլորւեց
և թողից որ քոյրը տառչ անցնի։

Երանք գուրս եկան քարայրից։

Սիդը թփերը զէն տառ, վազեց սահեց մի սա-
ցափ միջից, և զէմ առ զէմ գալով մանուկին, վա-
խեցած կանգ առաւ։

— Վայ, զոչեց նա, մի գտղան . . .



— Մի գաղան, կանչեց նրա և տեխյ Սամը, մի ձրչ-
մարի՛ս գաղան:

— Նայի՛ք:

Ծաղկի փառնչը ձևաքին, կանգնել գայլուկներին էր
դիտում մանուկը: Գայլ երբէ՛ չէր տեսել, չուն կոր-
ծեց նրանց:

Բայց Սիզը, երբ զարմոնքից ուշքի եկաւ, մի ձիչ
արձակեց և ետ փախաւ. Սամը զլորտւելով՝ հետեւց
նրան: Երկուն էլ հեւալով ներս բնկան քարայր:

— Մայրի՛կ... գաղան, աղապակիցին նրանք:

Մայր-գայլը ոկզրում չհասկացաւ, յետոյ երկու ու-
տիւնավ կարեց տարածութիւնը, ցնցեց մացաւներն ու
զարմացած մնաց:

— Ա՛, տաց նա տեսնելով մանուկին, մի փաքքիկ 0ձ...
— Ո՛, ի՞նչ մեծ շուն, մատածեց մանուկը և վախեցաւ:

Սիզը հասել էր իր մօր և տեխյ:

— Տեսա՞ր, մայրիկ, ի՞նչ մեծ գաղան է:

— Սա զեռ ձագուկն է, աղջիկո, տաց մայրը, պի-
տի սպանել որան քանի չի մեծացել ուս աշխարհիս ա-
մանախորամանիկ և գծուծ անասուններից մէկն է. ի՞նչ-
քան լւառութիւն անես նրան, քեզ այնքան վնաս կը
տայ:

— Զապանենք, մայրի՛կ, գոչեց Սիզը, տո՛ւր մեզ
խաղանք.

— Ի՞նչը ես խօսում աղջիկո, վախեցաւ մայրը, ոս-
քեզ, իրաւ է, առաջ կը զգւի, խարէւթեամբ մօռ
կրաց, բայց հէնց որ առիթ գանի, քեզ կը խեզդի և
վրագ էլ կը ծիծաղի, ոս մնը թշնամին է, պիտի ու-
տիւն որան...

— Զէ՛, մայրի՛կ, ի՞նդրեց Սամն էլ, որ այդ միջոցին
համուռմ էր, քաղցած չենք. պահենք որան, հետք
կը խաղանք:

Տիրուհի Զէրը շատ անգութ կին չէր, այդ օր էլ
քաղցած չէր, կուչուկիրել էր: Ամսն մարդ գլուխէ, որ
երբ գայլը կուշում է լինում, նա այլեւս ոչ ոգի չի վր-
նասում, մարգի պէս խօ չէ, որ ուսելուց եթէ արտք-
ւելու անգամ լինի, իր նմանին էլ գեռակը պատասխանի:

Մանուկը սիրա էր ամսում տեսնելով որ իրեն վր-
նաս չի համուռմ: Մասնեցաւ նրանց, կուցաւ ղեպի
Սիզն ու սկսեց վացքայէլ: Զէրի սիրար շարժւեց. —
Ասուածները վկայ, մտածեց նա, այս 0ձուկը ղեա մտ-
նուկ է և չար չի երեւում:

Սիզն էլ սիրեց 0ձուկին. լզում էր նրա ձեռքերն
ու երեսը: Քիչ քիչ Սամն էլ մօռ եկաւ: 0ձուկը նրու-
ուեց խստերի վրայ, Սամը մի քանի ոտտիւնով ու զեց
նրա ծնկներին ելնել, յետոյ գլորեց, Աիզին ծիծաղեց
և Զէրը մոռացաւ որ մի վասնդառոր թշնամի շյում էր
իր գաւակներին:

0ձուկն էլ տեսաւ որ մենց շանկ՝ Զէրը իրեն չէր
վկասում, մտաց վախախան քծնող մի ժպիսով —
ուս մարդկային օգոս նշանն էր — սիրա տափաւու ու սկսեց
խաղացնել գայլուկներին:

— Ի՞նչ կայ, մատածեց ըստի գայլու հին, մանուկներս
սիրեցին 0ձուկին, կը սպահեմ ինձ մօռ և կը սովորեց-
նեմ որ մեծացած էլ մեզ հետ բարեկամ մնայ...

Բայց ի՞նչ անել անուանէր Սարհօնին, որ նա 0-
ձուկին իր ստամբարը չմոցնի...

III

Այսպէս էր մտածում բարի Զէրը, երբ քարոզրը
ծածկող մոցաները շարժւեցին և հակայ Սարհօնը փր-
շտու, հետլով, զրիթէ ներս ընկաւ:

Գողզւած էր նա, այնքան յագնած, որ ոչինչ չը
նկատեց:

Գնաց մը անկիւն և ընկաւ ցած:

Վախեցաւ Զէրը, վազեց դէպի նա:

— Ի՞նչ է եղել քեզ, սիրելի՛ս, հարցրեց սարսափած:
Այդ ի՞նչ փաշի է փրադ. հագուստավ ինչո՞ւ է բգիկ-
րպիկ եղել... վայ ինձ, արիւն կայ սաներիւդ վրայ-
ուր էիր, ի՞նչ պատահեց:

— Թօղ քիչ չունչ առնեմ, կին դու, մաժաց Սար-
հանը յագնած ձայնավ, մահանից ազատեցի. քիչ մր-
նաց որ էլ ինձ չահանէիք:

Սամն ու Սիրը հօրից վախենաւմ էին և դրա հա-
մար էր որ երբ Սարհանը ներս ընկաւ, նրանք թաղին
Օձուկին և մի կողմ քաշւեցին, իսկ Օձուկը մի տեսակ
սարսափ զգաց նրա մեծ հասակից և արիւնով լիքը
աչքերից. հա- ետ քաշւելով գնաց մի մութ խորշ ու
կծկւեց այնաեղ:

— Խօսի՛ր, մարդ, ձչաց գայլուհին. ասա՛ առնենքը
ո՞րոեղ էիր, ի՞նչ է այդ վիճակդ:

Այն ժամանակ Սարհանը, որ աչքերը քիչ փակել
էր և մշջքի վրաց զետին փաւել, բարձրացաւ, կըսթ-
նեց պատին ու ասաց դողդոջիւն ձայնավ:

— Պատմեմ թէ ինչու այսպէս եղայ: Քիչ մնաց ի՞նձ
սպանէին այսօր: Գնացի անտառի խորքերը, թփի տա-
կից մի չտղ նապաստակ գտայ և ընթրիքա արի նրա-
նով, յետոց, սրովհետեւ կշտացել էի, ընտրեցի մի զավ
տեղ ջրի եղերքում և քիչ թեք ընկայ: Աքտնչելի էր
եղանակը, փչում էր մեզմ քամին, կչկչալով վազում
էր ջուրը, մարգերի ախորդելի կանաչութիւնը զմայ-
լեցնում էր: Ես վացելում էի բնութեան գեղեցիութիւ-

նը և հանգիստ սրա վվատրասուում էի մրափելու...
երբ յանկարն, ինձնից ոչ շատ հետո, լաւեց մեր սառ-
կալի թշնամու ձայնը՝ մեր այն ցեղակիցներից մէկի,
սրանց Օձերը զի՞նեցին մեր դէմ. մեր այն ցեղակիցնե-
րը, սրանք այնքան սարացան, այնքան ընկան, որ
ոչ միոյն սովորկում-քծնում են Օձերի սաքերի տակ,
ոչ միոյն լրում են նրանց զարնող ձեռքը, այլև մեզ՝
իրենց եղբայրներին ամեն մի բավէ մասնաւմ են օտա-
րին... Պնակալէզ-շան ձայնն որ լաւեց: Վեր թռայ.
հարկուոր էր պաշտպանել: Բայց լու զխան, կին
դու, որ հազար անդամ տեղի գւարի է ազատութիւն
յաւսալ, երբ մատնուում են եղբօրդ ձեռքով: Պնակա-
լէզը զաել էր խմ տեղը և գալիւ էր: Աշխատեցի փախ-
չել. ինձ նկատեցին, ետելից ընկան խմբավ, կծեցին,
պատաստանեցին... Հաղիւ դուրս պրծոց և ահա տես-
նում ես վիճակի... .

Ասաց Սարհանը և նորից աչքերը փակեց: Իսկ Զէ-
րը զայրացից դոգում էր:

Մի բավէ խորին լուսթիւն էր որ թագաւորեց
քարայրում, յետոց գայլը նորից բացեց աչքերը և
մրմիջաց բոզոքով ձայնով.

— Օ՛, այդ մարդիկ, այդ Օձերը... ի՞նչ էի արել
իս նրանց: Մի՞թէ իրաւունք չունենը մենք էլ վայե-
լիս բնութիւնը... մի՞թէ ամեն բան միայն նրանց է
պատկանում և արել ոչ ոքի...

— Մարդկանց անկթութիւնը, ասաց Զէրը, յայտնի
է, պարզ է, այդ սչինչ. բայց ի՞նչ ասել մեր պնա-
կալէզ եղբայրների մասնութեան համար:

— Է՛ս, կին դու, չէ՞ որ նրանց էլ մարդն է որ զի-
նել է մեր դէմ. այդ մարդ - օձի պէս անզաթ, ան-
սիրու և գաղան արարած չկայ աշխարհումու... Ո՛չ,

չկայ... և նրան պիտի ոչնչացնել, ոչնչացնել...

Սյդ ժամանակ միայն գայլուհին յիշեց փոքրիկ մանուկին. յիշեց և սարսափեց: Ի՞նչ պիտի անէր, եթէ ամուսինը զգար նրան. չէ որ պիտի բղկաէր: Օձուկին նա սկսել էր սկրել և չէր կամենալ նրա մահը. Սիդն ու Սամը կը մեռնէին, եթէ Օձուկին մի վիստ հասնելու լինէր:

— Զէ՛, մարդ, առաց նա ամուսնուն, Մարգր այնքան մեղաստոր չէ դրանում. ոչնչացնելու արժանի մեր այն պահկալէզ եղբայրներն են, որոնք մատնում են մեզ: Ասանց նրանց մասնութեան Օձը երբ կարող է մեր տեղը գտնել, մեզ հասնել, մեզ վեստել: Ետք ի՞նչ է որ... քանի՛ քանի օձերի դու ինքդ պատառումել ես:

— Երաւ է, մասնաց Սարհօնը, մարգր, չնայելով իր խորամանկութեան և չտրասրաստթեան, շատ թոյլ է և վախճառ. մի գայլ՝ նրանց 5-6-ին կը պատառաստի, եթէ այն անիծեալ կարմիր-Հրէցը (կրակը) չունենան իրը գինը:

Զէրը քիչ շունչ առաւ. ամուսինը մեղմանում էր, այժմ՝ ժամանակ էր մանուկի գոյութիւնը յոյտնելու:

Եւ որովհեաւ ինչ որ ուզենայ կինը՝ կարող է առնել, և որովհեաւ աղամարդը, վայրկեաններ կան, երբ պատրաստ է ինոնչ ասած յիմարսւթիւններին անշգամ հպատակւել — մի ժամկից յետոց այնպէս եղաւ, որ Օձուկը ներկայացաւ քարայրի տիրոջ:

Սա նախ մի խոժու ակնարկով դնեց նրան, յետոյ դարձու կնոջը և ասաց.

— Քիչ աւելի մեղմ դէմք ունի. բայց մեծանայ թէ չէ, նոյն զաղանը կը դառնայ. ինչ ուլ է, թող մնայ մեզ հետ, աւենինք ինչ կը լինի:

Եւ փոքրիկ մանուկը մնաց անտառում, գոյի ընտանիքում, ու մեծացաւ այնուեղ:

IV

Մնաց մանուկը անտառում շատ և շատ տարիներ գոյլի ընտանիքի մի անդամը՝ Սամի ու Սիդի եղբայրը եղաւ. և մեջանում էր նրանց հետ:

Գոյլուկները չէին վախենում նրանից. պատահում էր մէկ - մէկ, բնազգարար սարսափով ևս եխն քաշում, երբ նա երեսում էր, բայց քիչ - քիչ այդ խորթաթիւնն էլ վերացաւ. զոնէ երկու կողմից էլ չզարգանալով՝ անդորթ վիճակի մէջ մնաց. խկ մանուկը սկսեց գայլերի լեզուն սպասել:

Զէրը նրա հետ լաւ էր վարւում. մինչև խկ սիրում էր նրան, սպասիեաւ Օձուկը ձարպիկ էր, մաս գրլցում էր ծառերի վրայ, անուշանամ ձուեր գտնում, վատիկամիս թաշտններ որսում և նրանցից գայլուկներին համեղ կերակուր պատրաստում:

Տանաւէք Սարհօնն էլ սկսեց քիչ քիչ սիրել նրան: — Սա Օձուկ չէ, առաւմ էր նա յաճախ, Օձուկը այս պէս բազցը ու բարի չի կարող լինել:

Սյովէս, գոյլի ընտանիքը իր նոր անդամի հետ շարունակեց երջանիկ կեանք վարել երկար տարիներ: Ուշնչ չէր վրգութեամ նրանց երջանիկութիւնը մի քանի թիթե զէտքեր էլ շուտով մասացւում էին և մանուկն էլ մսաւնում էր որ ինքը օտար է բնանիքի համար: Եկաւ աշունը:

Սնաւառ սկսում էր մարկանալ, լոել ու զոյնը փոխել. անձրեային օրերին յաջորդում էին մթին զիշերչեր, բայց լաւ օրեր էլ պակաս չէին, մանաւանդ դիումզը եղաւ ամլաներում:

Գայլի ընտանիքը աւելի շատ և աւելի հեշտութեամբ էր սրա գտնում, զրա համար էլ պէտքները դուրս գալու պէտք չունէր: Մխանում էր նա քարայրի խորքում և նմէ լուսին կար՝ նրա աւճեւում. հայրն ու մայրը մի կողմն էին պազարում, իսկ մահաւկները խաղեր էին սարքաւմ և օդը սրախ ազմուկով լցնում:

Մի երեկոյ էլ, երբ մթնել էր և րոլորը ընթրիքի նար էին նստել, յանկարծ քարայրի գան առաջ փոյշեցին երկու աչքեր և լուսեց մացաների խշասցը:

— Ո՞վ է այդ, սահաց Զէրը:

— Բարեկամ է, լուսեց մի խոսքու, անախորժ ձայն, յետոց սուած եկառ մի մեծ դէմք:

— Մէջ - Խորհրդի Կարմիրն է, աւելացրեց ձայնը աւելի մօալից:

Սարհօնի գէմքը խոժուուեց: Այդ քառ զայլի զայլը լու բան չէր գուշակում: Բայց ոչինչ անել չէր կարելի, որավհետեւ Կարմիրը գայլերի Մէջ - Խորհրդի մեծափառ գլխին էր, նրա սուրհանդակիլ:

— Համեցէ՛ք, նե՛րս մախր, Կարմիր, սահաց Սարհօնը. համեցէ՛ք ընթրիքի:

— Ո՛չ, չնարհակալ եմ, սահաց Կարմիրը զուան մօալից, ես նար հմ ընթրել... բայց ինչ որ Օձի հառ է գալիս սասակեցից:

— Այդ ոչի՛նչ, Կարմիր, խօսեց Սարհօնը. երեկ շատ կուշտ չեմ ընթրել այսօր... նե՛րս եկ, աւենինք, Կարմիր, ի՞նչ լուր ես բերում մեզ:

Կարմիրը ներս եկառ: Բարեհնու նման ցից ու զըզգը զըզգան մազերով, խորս նանկ, աւելամանց հայսկ աշքերով փոքրիկ գայլ էր նա:

— Գիտե՞ս, Սարհօն, սահաց նա մտնելիս, ես Մէջ -

Խորհրդից հմ ուղարկւած, ժամանակ չկայ կորցնելու: Մէջ - Խորհրդի գումարուել է կըսր բլրի վլոյ և քեզ իր առեանն է կոչում...

— Ի՞նձ, իր ասեանը... ինչո՞ւ, հարցրեց Սարհօնը այսաւած. ևս ոչինչ չեմ զործել հասարակական : օրէնքների դէմք:

— Ես իրաւոնք չունեմ քեզ պատճուը յայտնելու, ասաց Կարմիրը լուրջ և խորհրդաւոր գէմքով յանուն օրինաց քեզ կոչում հմ Մէջ - Խորհրդի տականը և...

Եւ սասացու նա մի խրոխտ կերպարանք:

Եւ ի՞նչ, ը՞ գհասեց նրան Զէրը ծաղրական գէմքով, չինի թէ ինձ էլ են կոչում այդ Մէջ - Խորհրդի վեհաշուք տականը:

Մէջաշուք պատճառաւորը վիրասուեց մի կնոջ այլպիսի ծաղրական ձեւերից:

— Ո՛չ, սահաց նա կծու ձայնով, այլպիսի աեղերում կանայք գործ չունեն... կանայք ձայն չունեն...

— Հոգը դիմներից, զոյեց գայլունին, սահաց մեզ դուք ձայն կարո՞ղ եք ունենալ...

Կարմիրը, երեխ մասնելով որ կնոջ հետ գլուխ գնել պէտք չէ, մասնաւոր իր պէտ մի մեծանձն պաշտօնեացի համար — աշխատեց հեղնող ժպիս կազմել գէմքի վրայ, նայեց Զէրն և ապա Սարհօնին դասնալով սասաց:

— Հը... Մէջ - Խորհրդի հրամանըր... մի թէ չես աւդում գալ:

— Գիտե՞ս, պատասխանեց գայլը սաքի ելնելով, ամսն գոյլ պարաւոր է հապատկւել իր դրած օրէնքներին... առաջ բնկի՛ր...

Կարմիրը ասած անցաւ, բայլեց մինչեւ դուսը, ապա կանգ սասաւ, գարձաւ և սասաց:

— Գիտե՞ս ինչ, Սարհօն եղբայր, դորձից երեսում է
որ Օձուկին էլ հարկաւոր է հեռաներս վերցնել. ի՞նչ
Հարկաւոր է ինձ նեղութիւն առաջ նորից գտու:

— Օձուկ, գունաւոց Սարհօնը. ո՞վ է այդ :

Կարմիր գլխավ մանուկին ցոյց աւան :

— Ի՞նչ, բացականչեց Զէրը. Խորհուրդը գիշաէ նրա
մտախն:

Կարմիրը պատկաւանք արդազ կերպարանք կաղ-
մեց և գլուխը ցցելով առաց.

— Սարհօն եղբա՛յր և գուտիկի՛ն, մի անգամ բնեղ-
միւտ պիտի վիսենաւ, որ Մէծ-Խորհրդից ծածուկ ու-
չինչ չի մնամ:

Ապա թողնելով այդ աօնր՝ աւելացրեց. — Դէ՛չ,
շուտ, կանչե՛ր Օձուկին և գնանք:

— Վայ ձեր գլխին, ոռնաց Զէրը առաջ գալով.
Կորուի՛ր գու էլ ու Մէծ-Խորհրդից էլ...

— Տիկի՛ն... մենչեց բարկութեանի խորհրդի ներ-
կայացացիչը. Խորհօն եղբա՛յր, կնոջդ լուեցուր, դորձ-
ւած անարդանքը զագարեցուր... յանուն օրինաց...

— Շուտ, գուրս կորիր, քսու, որսաց նրա վրայ
գայլուհին և մօս վակեց:

Կարմիրը որ ես-ես էր քաջել, դուրս ցատկաց:
Առաջի լեզու էր կերել, որ մի կնոջից չվախենար:

— Ասուած իմ, ամիկին, ասաց նա, ինչո՞ւ ես բար-
կուսում, ես իմ պաշտօնս եմ կոտարում...

— Կորի՛ր... էլ սուերդ թող չերեայ...

— Քնանք, եղբայր, գնանք, կոնչեց կար իրք Սար-
հօնին և շատապով առաջ ցատկեց:

Ու երկու գայլերը շուռով անհետացան միւս թեան մէջ:

V

Գիշերը մկնել էր լուսնիայ զատնալ: Կլոր ըլու-
րը, որ գանեամ էր անսաւախ մէջանեղը, մի լերկ տա-
փարակ ունէր իր գաղաթի վրաց: Այդաեզ էր որ հա-
մարեւ էր գայլերի Մէծ-Խորհրդը:

Մօս հարիւր գայլ էին. եակեխ անհերի վրաց,
գունչերը ցցած, շրջանակածե նստել էին, մէջանեղը
մի մէծ կրկէս բաց թողել, և խորհում էին:

Մէկը միացն, որ նախագահն էր, մակը էր շրջանի
մէջ, զնում էր գալիս, երեմն կանգ առնում, գունչը
բարձրացնում ու մի երկար ունաց արձակում: Հազլու-
նա այդ վերջացնում էր, բուրոր միասին արձագանգ
էին տալիս նրան:

Ահա թէ ինչումն էր բանը: Նախագահը ձնուա-
խուում էր գնալով - գալով. և որովհեան բառ գայլերի
երեխ շատ լաւ էր խօսում, անդադար ծախճարում է-
ին նրան, այսինքն ունում էին:

— Քաջ գայլէր, քագաքացիներ...

— Բրառօ՛, բրառօ՛...

— Այսօր մենք ժողովւել ենք մի մէծ, շատ մէծ գոր-
ծի առիթօվ, որ մեր բնդհանուրիս շահերին է պատ-
կանում...

— Ո՛ւ ու ու...

— . . . Թշնամին մեր մէջն է, նա օձի ոլէս սպրդել է,
շան ոլէս հաճելի լինելով՝ զրաւել է մեր եղբայրներից
մէկի սիրոը, մանաւանդ մի թոյլ, ողորմելի կնոջ
սիրոը . . .

— Ա օ՛ օ՛ օ՛ . . .

— . . . Ցաւալի է, որ մեր եղբայրները պարքան եր-
կար ժամանակ նենակ օձին առքացնում են իրենց ծո-
ցում, մի օձի, որին արժէս ուտել միայն, ուտել-
այն . . . կարտել և ուտել . . .

Այսուեղ անշտ չա պատկանելի նախագահը ուզեց
մի կստակաբանութեամբ հասնեմել իր լուրջ ձառը,
ուստի մի ժպիս կազմից դէմքի վրայ և աւելացրեց.
— . . . Ռւահ⁶ . . . իհարկէ . այդպիսի համեղ պա-
տառ . այդ անիծածների միոր չատ համով է լինում:
— Առ առ առ . . .

Բոլորի բերնի ջրերը ծորալ սկսան . ոչ ոք չձիծա-
զեց : Ռւահ⁶ . ահ . . . և ո՞ր մի գալը այնուհետեւ կը
հակառակէլ պատկանելի նախագահի այդպիսի համե-
զիչ ճարատարախօսութեան :

Երկար , բաւական երկոր խօսեց մի ձառ , որուժ
նա գործադրեց ճարատարախօսութեան , ճառախօսու-
թեան բոլոր պատիքած պաշտօնական և անսպասօն
ձեւը , արտօնաբանական բոլոր սճերը : Օրինակ , երբ
կամենում էր շեշտակ մի խօսք՝ առջեկի սաների վրայ
ցատկում էր . երբ ուզում էր ազգու անել՝ պոչն էր
ցցում դեպի լուսինը , խոկ երբ կամենում էր մի բաւ
ոճ գործածել , ստում էր . — « ուսել , կտոր կտոր աշ-
նել , մոերը ծառել » և կտմ — « յանուն ընկերական
առանձինվութեան կոսորել նրան և բաժանել խորշողի
անդամներին » :

Պէտք էր ահանել թէ որպիսի ուսուաներ էր բարձ-
րանում , որպիսի էքստագի մէջ էին ընկնում լիորհրդի
մնածարդոյ անդամները :

Խոկ եթէ բան է ասում էր թէ՝

— « . . . իհարկէ՝ մեծ մասը թողնելով նախագահին
որ նեղութիւն է կրում . . . » խոկն մի խուլ չըուկ էր
բարձրանում : Տրամաբանութեան այդ սձր վարուց հր-
նացել էր և ինչպէս էր համարձակուում նախագահը
գործածել նրան :

— Առ առ առ . . .

Ահա այսպէս զբագւած էր Մեծ - Խորհուրդը , երբ
կարմիրն ու Սարհանը հասան բլրին :

Կարմիրը առաջ անցաւ , երկու ոստիւն գործեց ,
խոնարհեց նախագահի առաջ և ասաց .

— Ժաղավի հրամանը կտարարեցի . ահա Սարհանը :

— Թող գայ , թող գայ , ձայնեցին բոլորը :

Եւ Սարհանը մասու շրջանի մէջտեղը : Երկար ժամա-
նակ էր որ նա ոչ միայն Մեծ - Խորհրդին չէր ներ-
կացացել , այլև շատ գալիքի հետ կտրել էր իր յարա-
բերութիւնը . զրա համար էլ մի բագէ առլորը լուս-
թեամբ զիտեցին նրան , որից յետոյ նախագահը նըս-
տեց եռեկի սաների վրայ և ասաց մեծափառօրէն :

— Սարհան եղբայր , Մեծ - Խորհրդարդը զումարւել է
այսօր և քեզ իր առեանը կոչել : Գայլ եղբայրները քո
անձիդ գէմ ոչինչ չունեն , եթէ անհանդիսան աչքով
չդիսէին այն անիծակալ , մեր ցեղին թշնամի գաղանին ,
որ մաել է մեր մէջ : Դու նրան պահում ես , կերակ-
րում . նա արդէն մեծացել է . շուտավ նա էլ կըսկոի
կարմիր - Հրէշ գործածել և այն ժամանակ զիտե՞ս թէ
ինչ է նշանակում այն թշնամին , որ մեր տունն ու
տեղն է առնաչում , որ մեր լիզուին ու օրէնքներին է
ձանօթ . . . խօսի՛ր , ի՞նչ մտադիր ես անել :

— Այս , խօսի՛ր , ձայնեցին բոլորը :

Սարհանը զգաց որ Օձուկի բանը բարդ էր : Գայլերը
ուսելու փափաք անելին և մանուկի փափուկ մօրթը
զրգուել էր նրանց ախործակը :

Նա ստիպւեց նախ համառօտաւէս պատմել մա-
տուկի մուտքը իրենց մէջ , յետոյ պարզեց նրա մեզմու-
թիւնը , նրա՝ իր մանուկներին բարեկամ զատնալը . . .

— Գայլ եղբայրնե՛ր , վերջացրեց նա — ես չեմ կար-
ծում , որ զուք այնքան անգութ լինէք զարնելու հա-

մար մի անգին անձիք չէ՝ որ այդ Օձուկը ոյնքուն վարժել է մեր մէջ, որ այլևս մասացել է թէ արիշ հասարակութեան է պատկանում, մասացել է որ մեզ թշնամի է:

Հաղիւ թէ վերջացրել էր, երբ մի երխասարդանում վեր թռաւ, խօսք ուզեց և սկսեց ձառել ժառանգականութեան մասին, որով և հասաւած որ Օձուկը իր պատկերից ժառանգած լինելով դէպի դայլերը մի թշնամութիւն, վաղ թէ ուշ նրա մէջ վերաբանուելու է եղած բնապղը:

Նրա ձառը ազդեցութիւն թողեց, բայց արդ միշտ գայլերի մէջ հեղինակութիւն անեցազ մի չին պատերազմիկ առաջ եկաւ և առաց.

— Զինենք այդ Օձուկին իր եղրայրների դէմ մեր օգունին, ինչպէս որ մարդիկ զինել են մեր եղրայրներին՝ չներին մեր դէմ և մասնիշներ դարձրել նրանց:

— Կեցցէ՛, կեցցէ՛, առ առնացին ամէն կողմից:

— Բայց, գայլ եղրայրներ, խօսեց նորից Արքօնիք, ուս մի այնպիսի ցածութիւն կը լինէր, որին միայն մարդկի են բնուանակ, իսկ մեզ՝ գայլերից դա պատիւ չի թերել: Ի՞նչ կ'առէ մեր ազագոյ սերունդը, եթէ իւնայ մեր այն ասամբան թուլութիւնը որ սախաւած ենք այդ անսակ սատրութիւնների զիսել... ո՛չ, եղբայրներ, թագ միշտ մեր անունը անազարս մնաց մեր սերունդների համար, մենք անօթի չենք մնալ երեկք և ոչ է՛լ կը ոչնչանանք, մեր ձեռքերն ու ուժը մեզ միշտ կերակրել են ու սուշաղանել. ըլինենք մարդկանց պէս...

— Այս՛, այս՛, ձանեցին շատ երխասարդ դայլեր, Արքանը ազնիւ գաղտփարներ է յալանում, մինք համաձայն ենք նրա հետ:

Բայց որովհետեւ ինչ որ երխասարդութիւնը լաւ է զանում, ծերութիւնը՝ վաս, որովհետեւ հնի և նորի ծերութեան և երխասարդութիւնն կովուր գոյութիւն ունի բոլոր արարածների մէջ, գրա համար էլ խկոյն ծեր գայլերը հնամեաց պատերազմիկի կողմի բանեցին Սարհանի գէմ, և ահա հասարակութիւննը բաժանեց երկու կուսակցութեան:

Ծերերը պիտում էին, որ յանուն խոհեմութեան, զգաւշութեան և բնիկութեան յարաւելութեան՝ պէտք է լուցնել « ծուխ նոր գուրս եկածներին » և փոքրին էլ, պօլսուիկապէս, իբր զէնք գործածել թշնամիների գէմ:

Երխասարդներն ընդհակառակ գոռում էին, և անսառն էին թնդացնում իրենց ազմուկով, որ յանուն ձշմարաւութեան, որ ազգութիւնն չունի երածշառութեան և սիրոց պէս, յանուն ազնուութեան՝ որ համամարդկային է, պէտք չէ այդպէս անել:

Յասենացն դէպս Օձուկը վասաւել էր: Նրան էլ չէին ուտելու և այդ շատ ցաւ ազդեց Միհծորհրդի նախագահին, գվիրին և միւս պաշտօնեաներին, որոնք միշտ լու ախորժակ ունեն:

Բարկութիւնից նահագահնը ասամիները կրճակցրեց Օձուկի ապահովութիւնը կամեցազ երխասարդների վրայ և գոսաց.

— Ուտենք Օձուկին, ոչնչացնենք նրան, ահա խոռվութիւն սկսեց սերմանել մեր մէջ:

Ո՛չ, ո՛չ, ձանեցին դիպլոմատները. կենդանի թողնենք և իբր զէնք գործածենք նրան մեր թշնամիների գէմ:

— Ո՛չ, ո՛չ, մէջ մտան երխասարդները. կենդանի թողնենք և ազնուութեամբ վերաբերենք նրան:



350-79

— Գետի՛նն անցնէք ձեր ազնւութեամբը, սահաց նախագահը և անցաւ ծերունիների կազմը։ Պաշտօնահաներն էլ նոյն արին, իրենց պաշտօնի պահանջն էր այդ. բացի դժոնից, չնայելով որ երիտասարդ էին, բայց աւելի ախորժակ ունէին, քան գաղափարներ։

Բարձրացաւ գժոխայլն աղմուկ անտառի մէջ. կարդ մարդ չմնաց. ամէն ոք խօսում էր։ Վիճում էին, իրար դէմ քաղելով, պաշները թափ տալիս, ապա հոգառնում և իրենց կողքինի ականջը խլացնում. . .

— Խօսք կ'ուզեմ. . .

— Արձանագրել բողոքս. . .

— Իկարդ, պարոննե՞ր. . .

Ո՞վ էր լսողը. մարդիկ կազ - կանոն դիտե՞ն, որ գայլերը դիմունան։

Կամաց կամաց, որովհետեւ կուսակցական, մահաւանդ ուժեղ ձայնարկութիւնների, զօրութիւնը երիտասարդների կողմն էր, ծերունիները սկսեցին հոգառնել։

— Գնանք, գնանք, իզուր ժամանակ ենք կորցնաւմ, նշան տւառ հին պատերազմիկը։ Ժողով խօ չէ. ամեն մի երեխայի խօսելու են թողնում։

— Այնպէս չէ, մօտեցաւ նամ մի ուրիշ ծեր. ժամանակ խիստ փչոցել է. ո՞վ էր անսել, որ այդպիսի դեռ կաթ ուտողները ծերերի դէմ խօսէին։

— Ե՞ն, իհարկէ, այլես գայլութիւնը կըսկի այլամերել, փշանալ, դիմուեց մի երրորդ ծեր։ Վա՞յ քեզ, քաղաք, որ թագաւորդ մանուկ է. . .

— Զարմանալի է, դիմել էր առալիս մի ուրիշը, ինչու է նախագահը լսել և վանակել չի տալիս ժողովից բոլոր այդ աղմկարար երեխաներին. էլ ո՞չ ծերերի

պատիւ մնաց, ո՞չ, կարգ - կանոն. . . թէ ես կը լինէի նահագահ. . .

Եւ այսպէս, կամաց - կամաց, ծերերը հեռացան։ Բլրի վրայ մնացող երիտասարդներն էլ մի կէս ժամի չափ գոռվասացին, աղմկեցին, սպանացին և նրանք էլ գնացին քէֆ անելու։

Բլուրն ամայացաւ։

Այդ միջոցին էր որ թփի տակից դուրս եկան Զէրը՝ գայլուհին և Օձուկը, որոնք ժողովի կէսին հասել պահւել էին թփի ետեւում և այնաեղից լսել էին. ամէն բան։

— Տեսա՞ր, ասաց Զէրը դառնալով Օձուկին, ես քեզ չասացի՝ որ նրանք բացի դատարկ խօսելուց, ոչ մի հաւաքական վճար լնդունակ չեն. չասացի՝ որ պիտի կռւեն և ասանց մի վճիռ տալու ցրւեն. . . հողեմ ես դրանց գլուխը. . .

Մանուկը չպատասխանեց. մի խոր մոածութիւն համակել էր նրան։ Այդ օրը նա չաս նոր բան էր լսել. բառեր մանաւանդ, որոնք յանկարծակիլ էին բերել նրա միտաքը։

Ի՞նչ բան էր այդ « մարտ » կոչւած արարածը, որի եղբայրն էին համարում իրեն. ուրեմն ինքը գայլերի հասարակութեան չէր պատկանում, ուրեմն ուրիշ եղբայրներ ունէր։

Ալօտ, չաս ազօտ և չփոթ կերպով սկսեցին վերաբարպետ նրա մաքում խառնակ պատկերներ։ Նա սկսում էր յլշել ծառեր, չենքեր, տարօրինակ, ոչ - գայլային դէմքեր. . . և այլես ոչինչ. . . օ, որքա՞ն վազուց էին դրանք։

Գրեթէ չէր լսում Զէրին։

— Մայրիկ, ասաց նա յանկարծ. ի՞նչ բան է այդ

մարդ կոչւող արարածը, որին ինձ եղբայր էին հու...
մարտում և որմնց գլուխ էին ուզում զինել ինձ:

Զերը այլովեց: մի պահ պատասխանել չկարուցացաւ, յեսոյ բանեց նրա թեխց և

— Գնանք, որդիս, տասց գնանք այսահեղից, մի մտածիր այդ ախալքաների խօսքերի վրաց... զու ուրիշ եղբայրներ չունեա... ոչ, այդ տասծ արարածները քո եղբայրները չեն, ... նրանք չար, խորամանկ, իրար անդամ պատառող հրեշներ են... քո մայրդ ես իմ...

— Գիտում, դիտեմ, բայց... .

Եւ Օձուկը հասացեց. ոչինչ չէր հասկանում: Մի գտանութիւն սեղմաւմ էր նրա կոփորդը. զգում էր որ սրտից մի լար կարւեց և որ ինքը այդ հասարակութեան անդամը չէր, որ ինքը մարդ էր...

Բայց ի՞նչ էր ուրեմն «մարդ» ը...

V I

Թողեց մանուկը անտառն ու քարայրը, մի օր հեռացաւ գալերի հասարակութիւնից ու գնաց վնասական իր եղբայրներին, իր նման մարդ կանց:

Զդիտէր ուր էին նրանք, որ անտառի կամ որ քարայրի մէջ: Գնում էր վնասական. սիրոն ինքն առաւմ էր որ կարողանալու է գանել:

Քայլեց նա երկար: Երկու օր անընդհատ անցաւ անտառներ, կարեց գաշտեր, երրորդ օր՝ դիշերը հասուաւ մի մեծ զետի և հանգստացաւ մի ծառի տակ: Արովնեաւ յոզնած էր, սրակեց, քնեց և երազեց: Արգէս թէ մեծ այգու մէջ էր գտնեւում, ուր ման էին գալիս իր պէս, երկու ստքերի վրաց քայլող առարածներ... մի մեծ տուն սպիտակ պատերով երեւում էր այգու մէջ, իսկ նրա տռած գետնի վրայ վառ-

ւում էր խարոյկը, որից ծխի ծուռումուռ մի սիւնակ խառըէն բարձրանալով, անօրանում հալւում էր օգի կապութեան մէջ... Նո ուրախ էր որ գտնեւում էր վերջապէս խրայինների մէջ, ապրում էր նրանց հետ: Վազուց անցած - գնացած պատկերներ խառն ու աղօտ կերպով, իրար խճուած, հրէշային կերպարանքներ ստացած, գալիս մշտաշարժ հիւլէնների պէս պտտում և ապա ոչնչանում էին նրա առջեւ:

Յանկարծ զարթնեց և վեր թռաւ. մի քանի ձայներ ընդհատել էին նրա քունը: Երբ քնէած աչքերը արորեց, քիչ մեաց ուրախութիւնից ու զարմանքից գժւէր, մի վայրէնի, ուրախութեան ձիչ գուրս թռաւ նրա կրծքից... մարզիկ էին այնակը կանգնած, իր կողքին, իր տառաւ:

Այս, մարգիկ: Տիտուր, խորշամուռ երեսով երեք գէմքեր, որոնք խոշոր վայտերով զինւած՝ ըրջապատել էին նրան, լոկ հետում կանգնած մի աւելի հաստափորն ու կարձիկը՝ հրամաններ էր արձակում: Ակսեց ալքանութեամբ, խորին հետաքրքրութիւնը դիտել:

Եւ ամէն յիշազութիւն վերանորոգւեց իր մէջ:

Նրան շրջապատպանները կալւածի բանւորներ էին,

իսկ հաստափորը մի կալւածատէր:

Առաւօտը շուտով, երբ վերջինս, բաներով զինւած երեք բանւորների հետ այցելում էր իր արտերը; ծառի տակ տեսել էր այդ սերկանգամ, բրդոտ, խառն մաղեսով ու սոսկալի գէմքով արարածին:

Մարդ էր ինարիէ, մարդ, բայց վայրէնի: Եւ որովհետեւ այդ գէմքը պատահում էր աշխարհու մի այնպիսի անկիւնում, ուր այդ տեսակ թշւառ արտածներ հազւագէտ չէին, աղան մասածեց զարթեցներ նրան և տեսել թէ ինչ պէտք է անել յիտու:

Յանուարները ետք քաշւեցին, երբ «վայրենին» բարձրացաւ: Շատ էր նմանում մի գաղանի: և նրա տեսքը վախ պատճառաց բոլորին: բայց երբ աղան հեռւից տեսաւ, որ «գաղանը» չարսւթիւն չունէր գեմքի վրայ, յարձակման և այլն նշաններ չէր ցոյց տալիս, ինքը ստացաւ զօրեղի հովեր և դոչեց:

— Ո՞վ եռ գու, և ի՞նչ իրաւոնքով ես մտել իմ հողերի մէջ:

Մանուկը ոչինչ չհասկաւ, բայց յուղեց: Մարդկային ձայնը, չնայելով որ գուք չեկաւ, որտին խփեց. չէ որ իր եղացըն էր որ իրեն խօսք էր ուղղում: Փորձեց խօսել, ճիգ գործեց և կոկորդից միայն խօսել, ընդհատ ճիչը և սանցներ արտադրեց:

— Համբ է, վճռեց աղան:

— Համբ է, արձագանկ տւին բանուորները:

Զգաց մանուկը որ իրեն չհասկացան, որ ինքը նրանց պէս խօսել չէ կարողանում: հասկացաւ որ ինքը օտարացել է նրանց համար և որ իրենից վախենում էն իր նմանները: Բմբանեց այդ, սիրոք սեղմեց և արտառը իջան նրա արխանով մի աչքերից:

Աղան խմացաւ դըմոնով, որ վայրենին մի խեղձ համբ արարուծ պիտի լինէր, ո՞վ գիտէ որ կողմից եկած, ինչ արկածների ենթարկւած:

Եւ ուշադրութեամբ զննելուց յետոյ նրա կազմ ածքըն ու մկանունքները.

— Ուժեղ է, մտածեց նու, լու գործաւոր կարող է լինել և քիչով էլ զոհ կը լինի. երեք մարդու գործ կարող է չլինել:

Յետոյ հրամայեց գործառներին տանել նրան կալւած և կերակրել:

Այսպէս մանուկը բնկաւ իր նմանների մէջ: Ուշախ էր նու, խխաւ ուրախ: Տեսաւ նորից տուն ու

այդի, կրակ ու ծուխ, որոնց նա երազի պէս յիշում էր. տեսաւ թէ ինչպէս են ապրում մարդիկ և ինքն էլ աշխատեց «մարդ» դասնալ:

Միւս օրը արան նրան արտ և ձեռքը տւին բահն ու բրիչը: Զգիտէր, ինչ էին ուղղում անել տալ իրեն: Նրան սովորեցրին, որ պէտք է գործել, բահ գտնիւլ, հողը հերկել, վարել, բռուցնել և ապա նրա արդիւնքովը լցնել ազայի մեծ ամեալները:

Սկսեց նա աշխատել ուրիշ երեք բանուորների հետ: Գեռ ոչինչ չէր հասկանում. ուրախ էր, որ իր նմանների մէջն է. անում էր, ինչ որ ուղղում էին նրանից. ուսում էր, ինչ որ տալիս էին, իսկ եթէ աւածով չէր կշանում, գիշերները դուռը էր գնում; որն գտնում և անօթութիւնը յագեցնում:

Գեռ չգիտէրն նրա այդ սրաերի մասին, աղան չէր յինցել, ուստի և մանուկը կարողանում էր ստանքունին գոհացում տալ:

VII

Ապրեց նա այդպէս բռւական ժամանակ, մոռացաւ հետզետէ Սարհօնին ու Ձերին, Սիդին ու Սամին քարայրն ու անտառը. մոռացաւ ազատ օդն ու կեանքը: Աշխատում-գործում էր մինչեւ երեկոյ: Սկսեց քիչ խօսել էլ մարդկանց պէս և որովհետեւ ոչ մի անգ չէր գնում, համոզեց, որ մարդը այսպէս է ծնւել անգ է նրա կեանքը, որ իրեն պէս մարդիկ ստեղծւած են գործելու միշտ ազայի համար:

Բայց մի օր ամէն բան փոխեց: Մի երեկոյ, երբ յանկարծ տաւն եկել, ուղում էր քնել, հրաշալի ձայներ հասան նրա ականչին, ձայններ որոնք դուրս էին դալիս ազայի վերը գտնուող սկնեակներից:

Նա չէր մօտեցել երդեք այդ սենեակներին, մի տեսակ պատկառունքով էր նայել նրանց վրաց. արդիւ էլ էին մօտ գնալու և նա այժմ չէր հասկանում ու չինչ: Բայց զիշերը մութ էր և սենեակների աաց լուսամատներից դուրս մայթքով լսուր զբաւեց նրան:

Ծածուկ, սողակելով մօտ գնաց, բարձրացաւ, ներս նայեց ու շացու: Մի՞թէ այսուզ եղած արաւ բածները մարդիկ էին: Եւ եթէ նրանք էին մարդիկ, ապա իրենք ի՞նչ էին, ի՞նքը ինչ էր...

Այս մխաքը տախն ու վրայ արաւ նրան. ուրեմն գեւ իր եղբայրների մէջ չէր գտնուում, նրանց մէջ չէր որ բնիկը էր: Զգում էր, որ այնակդ, սրահում եղած սպիտակամորթ, լոյսով սպազւած արարածները պիտի լինեն իր եղբայրները և ոչ այն թշւառները, որոնք ամրագի օրը արեի տակ սեանալուց, քրանելուց, ու տանջելուց յիսոյ, երեկոյեան մի կառը չոր հաց էին կրծում և մեխնում քնելու մի կառը յարդի վրայ:

Մատախահ հեռացաւ նա սենեակներից և երկար թափառեց աննպաստակ: Չէր կարողանուում որոշել, ի՞նչ քրն էր անաստին, թէ այդ սրահի արարածները մարդիկ չին, այլ աւելի բարձր արարածներ: Այդ անհատապութիւնը նու չէր ըմբռնում:

Եւ երր քսելու էր զնում, հարցրեց բանուորներից մէկին:

— Ովքե՞ր են սրահում, մարդիկ են.

Բանուորը ծիծապեց զառնութիւնոր: — Իհարկէ մարդիկ են, խօ գալլեր չեն...

Մարդիկ... ուրեմն ինքը սրա՞նց մէջ էր ընկել, ուրեմն բանուորները ի՞նչ էին: Խարսե՞լ էր արդեօք: Եւ խալապէս, մի՞թէ այդ թշւառ արարածները նման էին այն վերի առողջ, զւարթ, ժպառուն դէմքերով, չքեզ հաղուստներով անձերէն, որոնք նստել էին ա-

նուշ կերակուրներով սեղանի տառաջ, վայելում էին երկնադին երած շուտթիւն, մաքուր մթնոլորդ... երկար, շատ երկար մտածեց, և դասնութիւննը համաշկեց նրան:

Երկրորդ օրը այդ մխաքը չհեռացաւ նրանից: Գորհում էր, բայց մտածում: Կէսօրւալ մօտ նորից մօտ գնաց իր ընկերներից մէկին և հարցրեց:

— Իսկ զ՞ուք, մի՞թէ մենք էլ մարդիկ ենք:

— Իհարկէ, պատասխանեցին նրան:

— Ինչո՞ւ ուրեմն նրանց նման չենք, նրանց կերածը չենք ուռում, նրանց սիէս զւարթ չենք, մաքուր չենք, հանդիսութիւննը չենք և չենք զւարձանում... մխմխայն գործում ենք...

Ընկերները չպատասխանեցին խկոյն: Նրանցից մէկը քիչ մտածեց, յետոյ գլուխը շարժեց և մամաց:

— Նրանք աղանդեր են... Ասուած աղդակէս է արել:

Նրանց խօսակցութիւնը լսեց մի ծերունի գործառութես, դադարեց զործելուց, բանը ցցեց հողի մէջ և ախրութեամբ առաց:

— Դու տառմ էիր, բարեկամ, թէ ինչու մենք նրանց նման չենք անում... շատ պարզ է, սրավհետեւ նրանք չեն գործում, խկ մենք զործում ենք և այն էլ այս պէս...

— Բայց ինչո՞ւ նրանք չեն գործում... հարց առաւ մահուկը:

— Որսէս զի մեզ նման չլինեն, մէջ մտաւ մի ուրիշը:

— Որովհետեւ, պատասխանեց ծերունին, որովհետեւ մենք զործում ենք նրանց փախարէն և ապրեցնում նրանց...

Եւ լսեցին: Մանուկն էլ լսեց, նրա մէջ մտածութիւնները աւելի խօր, վերլուծող բնաւորութիւնն ըստացան, և նա անդադար, հարցից հարց՝ մոլորւմ էլ-

Նզրակացութիւնների մէջ։ Ինչո՞ւ ուրեմն իրենք դորձում են նրանց փոխարէն։ մի՞թէ այդպէս ալէտք է լինէր։ Զէ՞ որ ինքն էլ կ'ուղենար նրանց պէս սպիտակ լինէլ, փափկամորթ, մաքուր հաղուած, լաւ սենեակների մէջ ապրել, լաւ կերակուրներ ուտել, վեարձանալ, երածառութիւն լսել... .

Այս՝ ևթէ ինքը մարդ էր, ուրեմն իրեն էլ հարկաւոր էր արդ բոլորը, իսկ ևթէ մարդ չէր և իրաւունք չունէր դրանց, ինչո՞ւ ուրեմն աղաս կեանքը թողել, ևկել նորից անասունի կեանք էր վարում, աւելի վաս քան գայլի կեանքը...

Երկրարդ երեկոյեան, երր վերադասնում էր դորշից, էլի մօտ զնաց սրահներին, էլի խօսակցութեան, ծիծադների, երածառութեան և երջանկութեան ձայներ վրդովեցին նրան։

Նա ներս նայեց։ Սրահը լիքն էր։ Նստել էին մի մեծ սեղանի շարջ, ուտում էին և խմում, իսկ լոյն ու երածառութիւնը լցրել էին սրահը թոթուումներով։

Այս՝ մարդիկ այնակ էին և ոչ թէ ցածում։ Սրաւել էր, պէտք էր իր նմանների մօտ դնալ։ Եւ վճական քայլերավ բարձրացաւ սանդուխը, դէն շրպբռեց դռան մօտ իր առաջը կտրող ծառաներին ու համարձակ սրահը մտաւ։

Նրա փոշոտ, մե ու կոպիտ գէմքը, նրա հաղուասըն ու յանկարձակի մուտքը սարսափահար արեց հիւրերին։ Բարձրացան բոլորը սեղանից ու իրար խառնըւեցին։

Մահուկո մի քիչ մօտից դիսեց թռչունների պէտքախցող այդ արարածներին, յիսոյ երկու քայլ էլ առաջ դնաց և ասաց։

— Հանդարձակցէ՞ք, ես վիտս չեմ տալ ոչ սքի, չէ՞ որ

ես էլ մարդ եմ, ձեր եզրայըն եմ... այս՝, ձեր եզրայըն եմ— այդ ինձ գայլերը ասացին — մարդ եմ ես էլ...

Կալւածանէրը, որ ձանաչել էր իր «վազրենուն» մօտ զնաց նրան սպառնալից գէմքով և դռչեց։ — Ինչպէս համարձակւեցիր զու, անպիտան դործաւոր, մանել աղայիլոց սենեակը... զուրս կորի՛ր ... ծառանե՛ր, զուրս ձզէ՛ք այս անկիրթին... .

— Սպասեցէ՛ք, ասաց, մեղմութեամբ մանուկը. մի երկու խօսք ունեմ, ասեմ և յետոյ ինքս կ'երթամ։

Բոլոր հիւրերը, սրանք էլ չէին վախենում, սրովհետեւ մի զործաւոր էր մանուզը, մօտեցան և լսեցին։

— Խօսի՛ր, ասաց խստութեամբ տանուտէրը։

— Ասացէ՞ք ինդքեմ, հարցրեց մանուկը, զուք մարդիկ էք, այնպէս չէ։

Բոլորը ծիծադնեցին. այդպէս արւած բնական հարցը կամ— զարմանք, կամ ծիծադիկ առաջացնում։

— Մարդիկ էք, այդ ես աեսնում եմ, շարունակեց մանուկը, բայց նկատում եմ հետեւապէս, որ ցածում, ինձ հետ բնակւող արարածները, ինձ հետ զեանի վրբայ քնող, չոր հաց ծամող ու անդադար տանջող միւս արարածները մարդիկ չպիտի լինեն, այլ սնասուններ... Այդ այդպէս է, սրավհետեւ նրանք երբեք, ունչով նման չեն ձեզ։ Նրանք ախտուր են, զուք դւարթ նրանք լախս են, զուք ծիծադում էք. նրանք ազատ են, զուք մաքուք. նրանք մերկ, զուք չըեղ հաղնըւած. վերջապէս նրանք ուտում են չոր հաց և տանջըւում են ամրող օրը, իսկ զուք վայելում էք այդպիտի կերակուրներ և երբեք չէք դործում... . մի՞թէ սենք էլ մարդ չենք։

— Դուք էլ մարդ էք, իսկական, զոչեց մի երիտասարդ, բայց ոչ մեզ նման։

— Ո՞չ ձեզ նման... այս՝, այդ ձիչդ է։ Ես այդ տես-

նում եմ: Բայց սրավհետեւ մարդ ենք, ուստի և հարկաւոր է ձեզ նման լինել: Ինձ տասցին, որ մենք պիտի աշխատենք՝ ձեզ ուսւեցներու համար. համաձայն եմ, աշխատինք, բայց միտան ուտենք. ինձ էլ առեք իմ աշխատածը, ևս էլ եմ ուզում ձեզ պէս լինդալ, գլու ուսել, հաղնեւել...

— Ելենթ է, ձախեցին մի քանի երիտասարդներ:

— Վասնդաւոր մարդ է . . . դիտել տւին քիչ աւելի հասակաւորները:

— Ոչ լիենթ է և ոչ էլ վատանգաւոր, մէջ մասու տառնուտէրը. զես անկիրթ է, իր անտառներն է լիշում . . . ծառաներ, ասրէք սրան և կրթեցէք . . .

Եւ բանեցին մանուկին, իջեցրին ցած, կապեցին մի ձառի. . . ու կրթեցին . . .

VIII

Պասկել էր նա արխանչապախ, մի մութ ունիակում, խոնաւ գեանի վրայ:

Եւ տիսուր էր, մւայլ: Այս, որքան երջանիկ էր նա, երբ գալլերի մէջ է . . . ար նրան ոչ ոք չէր նախառում, ոչ ոք նրանից աւելի չէր, առաւելութիւն չունէր, ոչ ոք նրանից չէ . . . խլում իս աշխատածը և կամնրան աղդպէս արիւնչ պախ դրաւթեան մէջ նետում:

Ու լաց էր լինում, անում էր գալիք պէս:

Ոչ, աւելի լաւ է էլիք գալիքոփ մէջ գնալ. վերագառնալ այնուեզ, իր բարի Զէրի՛, իր Սիդի՛ն ու Ատմի՛ն տեսնել, նրանց հետ ապրել: Մյուտեզ նրան սիրող չկայ. այսուեզ միայն տէր ու ծառայ, զրկող ու զրկող, բանացող ու սարսակ են բարոք . . . բալոն էլ թշւառներ, սրոնք սիրել չգիտեն, չեն էլ կարող:

Ոյո՛, թողնել պէտք է մարդկանց և զնուլ էլիք գալիքի մէջ:

Բայց մանուկին բանտարկել էին, ուզում էին կրթել նեղ մինուլրափ, ծառայականութեան և հնագանդութեան վարժեցնել, մառացնել տալ աղատ օդն ու «վասնդաւոր» փափաքները:

Բարձրացաւ, ցնցեց իր վրայ փակւած դուռը, անաց, զուաց, օգնութիւն կանչեց, բաց անել խնդրեց . . .

Եւ դրախց լսողները «ցաւելով» տառմ էին. խենթացել է, խեղձը:

Իոկ նա ազատութիւնն էր ուզում, իր անտառը անհչում:

Մի ուժգին հարւածավ զուռը տապալեց, զուրս թռու ուրսիստութեան ազագակը րերանին և հնացաւ րնակութիւնից: Բայց նրա եակեց պնդում էին, շուտով թափեցին նրա վրայ ամեն կօդմից: Նա պաշտպանեց ձեւքերավ, խիեց շատերին. արիւնը աշքն էր կոխել, հարւածեց իրեն բանդներին:

Եւ բնինում էին նրա հարւածների տակ . . . ինչո՞ւ էին արդերում, իրեն ազատ ման զալու, զնալու ուր կուզեր. ինչո՞ւ էին ուզում բանտարկել իրեն:

Էլ չէր ուզում իր չոր եղբայրներին, սրանք իրեն միմիայն ցաւ ու վիշտ էին պատճառում, միմիայն աշնչում էին: Ոչ, աւելի լաւ էր զնուլ զանել զոյլերի հասարակութիւնը . . .

Բայց շուտով շրջապատեցին նրան խմբեր՝ բրերք ձեռքերին, բանեցին նրան, ակզացին նրա վրայ հարւածներ, յետոց շղթայ զարկեն ու նորից տարան մի խոր, մութ ծակի մէջ փակեցին:

Յոզնել էր կուի մէջ, մենակ էր բանութեան բարբուկների՝ խուժանի զէմ և բնիձւում էր:

Եւ լսում էր, որ մարդկային ամրոխր զբախց ունում էր քաղցած զայլերից աւելի վատ.

— Ապանեցէք վայրենուն, մահ մարդասապանին . . .
Գիշերը անցկացրեց ուշագնացութեան մէջ. ոչինչ
չէր լիշում. չէր կարսպանում շարժւել իսկ . . . կը ցան-
կար մնանել, ազատւել, չէր ուզում այդպիսի կեանքը . . .
Չիժացաւ թէ ինչպէս միւս օրը զարթեցրին իրեն,
ձեռքերը չղթալիցին ու դուրս տարան:

Մեծ ամբոխ էր հաւաքւել նրա ձանապարհի վլ-
րայ: Խուժանը ձեռքերն էր բարձրացնում, ոռնում . . .
և նրա ակնարկը միմիայն զղւելի, սորկական կամ շար
դէմքերի էր հանդիպում:

Այս է մարդկութիւնը . . . մտածեց նա և ցնցւեց:

Մէթէ ինքը դրանց եղարկն էր, զրանց նմանը . . .

Երկար չխօսեցին որահի մէջ. շուտով բռնեցին
նրան, ձեռքերը հանելից կապեցին և տարան մի լայն
հրապարակի վրայ, ուր կար կեռ ցիցը կանգնած:

Հտնդիսաւոր կերպով, շրջանաձև պտտեցին այդ
ցիցը, յետոյ մի սկ հագած անձ փափսաց խօսքեր նրա
տկանչին, մի ինչ որ նոր կեանքի մասին մրմնջալով . . .
և մէկը ձեռքի բռնած չւանդր անցկացրեց նրա վզեց,
ասիսկ բարձրանալ աթոռի վրայ, մի ուրիշն էլ չւանդր
տարաւ ու կապեց բարձր ցցին:

Եւ լուռ էին: Միայն ուրդ ժամանակ լոել էր խու-
ժանը: Մանուկը տեսու նրանց գաղանային չար ար-
տայայառութիւնը, իր եղբօր տան չտնքներով զւարձու-
ցող, գաղանից տւելի չնչին արարածների ցանկու-
թիւնը: Նրանց արիւնարբու, նախաձիրացին ոգին նը-
կարւած էր տեսնուում նրանց դէմքերի վրայ . . .

Ու յանկարծ զգաց, որ գետինը խուսափում է իր
առքերի տակից, որ մի բան խխտ կերպով սեղմում
է իր կոկորդը: Խեզքուում էր, չւնչը կորւում . . .

Ուզեց զուալ, բայց նրան թւաց, որ մի հսկայ
ձեռք վայրկենապէս կորդեց նրան, սրացումով բարձ-
րացրեց, գնաց մի բօպէաչափ և ճղելով անպերը,
տարաւ նրան հեռու, շամա հեռու . . .

ՎԵՐՋ

ՔՐՔԻՉՆԵՐ

ԱՐԵՒԵԼԵԱՅՆ ԱԶԱՏ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

Ես շատ կուզէի մի վարդ Հոտոսալ,
Որ իր հուտ երբեք փուշեք չունենար.
Եւ ես կուզէի մի բրիջ լսել,
Որ զոնէ իր մէջ զաւն շեշտ չկըէր.
Քրիջ յարատու եւ ոչ դիւային,
Որին զանոնութիւնը չփոխան սկըն . . .

Գտնւում եմ մի ժայռի գլխին: Մի խոր անգունդ,
որի յատակը կորսւում է խաւարի մէջ, պարզւած է
ոտքերիս տակ: Աչ կողմից մի ջրվէժ գուրս պրծնե-
լով գահավիթւում է զէպի անգունդը, իր փրփու-
րով լւանում է շուրջը և իր շառաչիւնով թնդացնում
լեռները: Նրա ձայնը՝ մանչող վերեսում շնչում է ցա-
ծում: Ջրային փոշու կաթիւները ուղանում են և գնում
հանգչելու խոտերի վրայ:

Դէմ ու դէմս փռւած է մի խխտ անտառ. նրա
ներքեի ծացրը կորսւում է զէպի անգունդը, վերի
ծացրը տարածւում, ծածկում է սարահարթը, մազբլ-
ցում է լեռներն իվեր և գնում բծաւորելու նրանց
ձիւնապատ կատարները: Վճիտ առւաներ իշնելով
այնտեղից, սողոսկում են սարահարթի խտերի մէջ . . .
Քիչ հեռու լուսինն է, որ փողփողեցնում է լճակի
խաղաղ ջրերը և երեւցնում ալիքների վէտ վէտ ծա-
ծանումը:

Մի անտառ . այս ու ազն կողմ՝ կանաչ բացւածքներ , ակօսւած մանր վտակներով . նրանց եղերքին միքանի խալովկներ . . .

Ահա թէ ինչ եմ տեսնում իմ ժայռի գլխից : Միթէ , լուսնի տժգոյն շառաւիզ և նրա մէջ մի նաւակ , որի միջից ինձ հասնում են երածշառւթեան ձայներ :

Ամէնքը կարծես զւարձնում են : Միթէ խոկտէս կամ մարդիկ , որոնք իրենց երջանիկ են զգում և սիրուանեն զւարձանալու :

Երբեմն լսում եմ , մարդկոցին ձայներ զանազան կողմերից : Արգեօք անսանապահներ են , որոնք թուզած իրենց կովերը կանաչ խոսի մէջ , ընկողմացել են կրակի շուրջը . . . և կամ քաղաքից այստեղ եկած զանազան խմբեր , որոնք զւարձնում են . պիտի երգեն , պիտի պարեն . . .

Եւ բարձրանում է մի ձայն . մի քրքիչ է , մի զրւարթ , աղմիալի քրքիչ նրան հետեւում է մի երգ :

Խանգաղ լիքը միք ձայն է , որ սկսում է մեզ , յետոյ սրսաւմ է , նորից մեզմանում և գնում մեռնելու օդի մէջ :

Գիտէլի ովքեր էին : Ուստի ուսանողների մի ընկերութիւն էր , որ երեկ եկել էր մի պատյան գործելու աղատ Զւեցէրխայի այդ չքերպարդ լեռներում :

Եւ ականչ եմ գնում ուշագլութեամբ . . . Յայց ինչո՞ւ այդ մելամազնու եղանակը , ինչո՞ւ այդ արտասալից շեշտերը , այդ դասն եկեւիչը , որ արտասաւում է ; ողբում է մինչև վիրջ .

Ով զու ճակատազիք ,
Եմ դասն ճակատազիք
Ա , ինչու զու ճակատազիք ,
Են սիրիք հասցիք :

Ահա թէ ինչ էր տսում երգը . ահա երգը , որ քրքիչին շնորհեց : Արգեօք այդ մարդիկ տրտառելո՞վ են զւարձանում այնահեղ . . .

* * *

Մի րօպէ , մի րօպէ կուզէի տռանց գտանութեան զւարձութիւն անհնել , տռանց զատն չեշտի քրքիչ լուն , տռանց տիսուր փշերի՝ վարդ անսնել : Ինչո՞ւ չկամ երջանիկ մարդիկ . ինչո՞ւ զւարձանալու գուրս եկած այդ ուսանողներն անգամ Սիրիրի բանաւորութեան , անիրաւութեան և թշւառութեան ոգր են միշտն հնչեցնում : Ինչո՞ւ երգերը արտասաւում են և զդժաների անսելի խշնչոց արտապայտում :

Չէի ուզիլ աղիւս լուն այդ բալորը : Բաւական է , ինչ որ գիտեմ հէք և լնինւած միլինաւոր մարդկային կոյտի մասին , որ հեծենում է արքայական արիւնու ձիրանների մէջ , որի կեանքում մի րօպէ երջանեկութիւն չկայ . զիտակցական կետո , ազիտութեան , խուար , կաշկանգում , բանաւորութիւն և շղթոյ , մտրակ և ասանջանք . . . Նրա չսր հացը արիւնով շաղուած , նրա հիւթը սարգերի յանձնւած . նրան սղբուցողները հեծենում են գետնափառ հանքերի մէջ , շրդիայի , ծիծի և ունին անսակ «օրինաւոր» բարբարասութիւնների ենթարկւած . և զւեցէրխայն աղատ շրքեկ մնաւաներն իսկ արձագնդ են տալիս այդ սուկովի կեանը ից գուրս մզւած աղերապ :

Ռաւս ուսանողը թշւառութիւնն է երգում իր զւարձութեան մէջ , անգունգը միշտ նրա աչքի տունեւրն է , անգունգ իր եղբայրների զիտկներով լցում : Իր եղբայրների արիւնով խսնաւցած : Նա կաացել է բանակառութեան այդ տեսարանի վրոյ և հեծենում է .

• Ա՞զ զու ճակատագիր,
Իմ զուն ճակատագիր
Ա՛, ինչու զու ճակատագիր,
Ինչ սիրի հասցըիր:

Դառնում եմ ուրիշ կողմ՝ աւելի հեռու; Մի թոյլ
խարդիկ երրեմի փայլիլում՝ է և երրեմի բարձր բոց
տրձտկում; Նրա շուրջն էլ մարդիկ կան. այնտեղից
էլ լուսում են ձայներ: Արդիօք, եթե ուշագրութիւնս
գէպի նրանց գարձնեմ, նորից պիտի լում հառաջանք
ե ոզր...

Այս անգամ մի հայերէն երգ է հնչում ականջիս:
Էհ, այս՝ հայն էլ գեռ ուզում է գւարձանալ: Երանի
ձեզ: Քրքիջ չկայ, հայր ախրաւթեան մէջ քրքջալ չը-
գիտէ. բայց ազմուկ կայ, հայր աղմիկէ լու զիտէ:

Երգում են միասին. ուկի ձայնը աւելի բարձր է
հնչում: Երգում է նրա երկար սաւերն խիկ: Կիսովին
լճակին գարձած, նու նոյտում է լուսնին և զիւ ձայնով
սասում.

Սի, ցոլա՛, վայլէ՛, ափարիմ լուսին,
Գուցէ րո վայլիյ վայլ տան եւ նոյնի...

Ո՛ խեզ յ ողախորդ, որ լուսնի փայլավ — առ դ
ազօտ և առ զոյն փայլավ գոհ ես լինում. ո՛ սակաւա-
պէտ ազգ, որքա՛ն թշոտ ես արգիօք, որ լուսնի
փայլին անգամ նախանձում ես:

Զւարթ երգ չկայ: Մէկն իր ճակատագիրն է ամ-
րառանում — ճակատագիրը որ չպիտ է պատրաս-
տում. խիկ միւսոր՝ միւսն էլ լուսնի ազօտ փայլին է
նախանձում...

Անիրաւութիւն և աչսութիւն. վազուց է որ
գուք բերանս բացիք հասաշանքի, և աչքու արաւու-
ութիւն համար. վազուց է, որ մի սոսկալի ատելու-
թիւն է բուն գրել լոմ մէջ գէպի հարաւատը. գորեզր,
հզօրը, գէպի բոնաւորը և հարստահարսոր, գէպի կո-
պիտ կամ նուրբ շահագործութիւնները. գէպի անիրաւ
և «օրինաւոր» անիրաւութիւնները. գէպի պարզ և
գիւնակաւոր բանարաւութիւնները, — գէպի կրօնական
գէպի քաղաքական հրեշութիւնները, գէպի բոնակալր
և հարստահարսոր...

Լացի թշւասի հետ, մաշւեցի զրկւողի հետ. ձնշ-
ւեցի գերաւթեան տակ ձնշող եղբայրներիս հետ. ձե-
րացայ. քրքիջ է ալզածո, քրքիջ զւարթ և առանց
դասնութեան:

Ժամանակ է գւարձանալու. քրքջացէ՛ք մարգիկ,
ձիձազեցէ՛ք ծաղիկներ և թող ձեր նոյն խիկ բօպէտ-
կան քրքիջները մեւազնեն աղբերը, խափանեն նրանց:

Լացիցէ՛ք գուք, թշւասներ՝ զւիցէքական այս բա-
քանչելի երկրում, ուր աիրաւմ է ալզաւութիւն. ուր
չկայ չզիմայ և բանակալութիւն, ուր «ճակատագիրը»
չէ մինչեւ Ալիրիր մզազը, ուր մարգիկ մարգ են, ուր
նրանց անասաւնների և իրերի պէս չեն չպրատում այս
ու այն կողմ, անգունգից անգունգ, չզիմայց չզիմայ.
ուր աանջանքը և նրա գարձիքները վազուց պատ-
մական հնութիւններ են գարձել... լացիցէ՛ք, ձեր ելուց
անտեղի է. գնացէ՛ք այնահեղ լացիք, ուր սպարին
գորութիւն ունի. պատեղ չկան թշւասներ. այսուել
տիրում է ալզաւութիւն, հուսաւրաւթիւն և եղբայ-
րութիւն...

Եւ ես ականջո գարձնում եմ գէպի լիձր և նրա

վրայ սահմանական որի մէջ անշուշտ նստել են մի
խումբ զւարիթ զւիցէրացիք զինու չշրի առջեւ, նևա-
գարաններով և քրքրջացող բնիկեռահներով: Երգում
են անշուշտ իրենց աղասութիւնը և երջանկութիւնը:

Նաւակը լսում է: Երգեցէք, երջանիկներ, թո՛ղ
ձեր զւարիթ խաղերը խափանեն վերը նստող բուերի
սպրը, թո՛ղ նրանք փակին մեր առջեւ փաւող անդուն-
դի գարը... .

Թո՛ղ ձեր երգը հնչէ անգագար բարձր, կայտառ
և հնչուն եւ նրա իւրաքանչիւր կասրը թող պարզէ
երջանկութեան, կեանիք եւ աղասութեան գրօշը, ար-
տարակու քրքիջ և ուրախութիւն:

Ականջ եմ գնում: Նաւակն օրօրւում է ճանկի մա-
նըր ալիքների վրայ, ձիջդ լուսնի սփռած շառաւիղ-
ների մէջ:

Մի ջութակի ձայն է լուսում նախ, նրան բնիկերա-
ցիլ է կանացի մի հարուստ և քաղցր ձայն, և քա-
մին այդ ձայները ինձ է հասցնում: Երբեմն մեզմ և
երբեմն ուժգին:

Եւ մը պարզում է, անշուշտ մի զւարիթ սիրա-
հարական երգ են երգում այնուեղ, չէ՞ որ երգողները
զւիցէռացիք են, սրոնք սիրում են, սիրում, ապրում
են. ոչ ոպրը գիտեն եւ ոչ վիշտը, ոչ Ալիքի տանող
«ձականագիրն» են մեղագրում եւ ոչ լուսնի առեգոյն
լոյսին նախանձաւ:

Հնչի՛ր, ջութակ, հնչի՛ր զւարիթութեամբ եւ թո՛ղ
քո ձայնը թրթուացնէ իմ սրտիս կարտուած լարերը.
Երգի՛ր զւիցէրաւհի եւ թող քո եռանդուտ երգը չեր-
մացնէ իմ սառած սիրար, հովացնէ նրա խոցերը.
Թող կարի մղկանացող սպրը, հասացող ձայները:

Լարում եմ ուշագրութիւնն, եղ մասկը զւարիթ. է-
սկսում, ևս մասում եմ. չէ՞ որ ուրեմն կան գեռ եր-
չանիկներ:

Հնչում է ջութակը և երգում է գերեցկաւհին:

Չոչչորէ՛ր, ասնցի՛ր, թշւառ գոշնուոր,
Ազառ հս-բշտնի՛ր, ազառ-հս արնի՛ր,
Թող զայ բուրժուան «ազառ», ևս կըկնէ
Եւ ասկան բրտինը ժպտելով լափէ,
Օրէնքը նրան էլ «ազառ» ես ասէ...

Դարձեամ ոզր, գարձեալ թշւառութիւն, Ասուա ծ իմ:

Մարգիկ տանչուում են, մարգիկ շղթաների տակ
են հեծեծում, մարգիկ լուսնի ազօտ փայլին են զի-
մում կարօտով և մարգիկ աշխարհիս ամէնաազատ հա-
մարւած երկրում՝ կովի մարտկից զերծ՝ մէջքի վայ
արծոթի եւ սոկի մարտկների հարւածներն ունեն:

Արծաթի մարտկի մզր, զու աւելի զառն ես, ա-
ւելի նաւասացուցիչ, քան բոլոր բանաւորական կոպիտ-
շղթաների ազդած հեծեծանքը ...

Եւ ես քրքջում եմ. զիւակին մի քրքիջ գուրս է
կորդում ինձնից: Ո՞ ազառ Զւիցէրիս, ո՞ «ազառու-
թիւն», հաւասարութիւն և եղբարբութիւն» ծամծմած
բառեր, գու՛ք, ձեր բոլոր գարեւոր կոտորածներով
զեռ անհնար եղաք չնչել զերութիւնը: Զեր արածը
միայն մի շապալութիւն եր — կաշին մետաղի վախեցիք
և աւելի ոչինչ...

Զեր քրքիջը աւելի գառն, աւելի ախուր է, քան-

հակատագիրը մեզագրողների եւ լուսնի փայլին նույնանձողների հառաջանքը :

Իմ պատաքաքո չկատարւեց ո՛չ քո հրաշալի լճակ-ներով եւ ոչ էլ քո «ամէնազատ» տիտղոսով, եւ հանորից եւ միշտ գոչում եմ.

Եւ ես կ'օւղեի մը ըըբիչ լուր,
Որ իր մէջ զանէ դառն շեշո չ'ըէքո:::

ԱԵՐՁ

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԻԶՄԻՐԻ ԽՄԲԱՏԵՂԻՆ

ՄԵԶ ԿԸ ՎԱՃՄՈՒԻԻՆ

Մէջ. 19 էն Դահնեկան

- | | |
|-----------------------------------------------------------------|--|
| 1. Ազատութեան ձմեռագրչին (Ղարիպ) Գ գրկ. 3 | |
| 2. Ազրաբայլին ծրագրի հարցը և գիտական
սօցիալիզմի տեսութիւնը 4 | |
| 3. Անջատուածները 2 | |
| 4. Ազրիւր Սերոբ. կհնագրական | |
| 5. Ապակեզրոնացում (Ս. Զուարեան) 4, 25 | |
| 6. Արհեստական միութիւններ 3 | |
| 7. Ասիւծի ժանիքէն 3, 50 | |
| 8. Յուրժուական սեփականութիւն և նրա
ապագոյ գրաւումը 4 | |
| 9. Les Plaies du Caucase 12 | |
| 10. Գէորգ Զավուշ 1, 50 | |
| 11. Գիւղացիներին 4 | |
| 12. Գիւղացին և բանուրը 50 | |
| 13. Գիւղացիական հարցը ֆրանսիայում 4 | |
| 14. Գորդեան հանգոյցը 3 | |
| 15. Գրանի Ազգացին երգարան Հր. Տալ. իսկ. 4 | |
| 16. Գաշնակցութիւնը և նրա հակասակորդները 8 | |
| 17. Գասակարգային կուիթ թէօրիայի շուրջը 2 | |
| 18. Գաւիթ բէկ (Բաֆֆի) | |
| 19. Դէպի կոխ (Ակնունի) 42 | |
| 20. Դէպի ֆէպէրացիա 12, 50 | |
| 21. Դէմկրատիական բնարութիւններ 2, 50 | |
| 22. Երգեր ու վէրքեր 45 | |
| 23. Երկու ծրագիր 3 | |
| 24. Եւրապացիների կարծիքը Հայկ դատի մասին 3 | |
| 25. Ինդարձակ գլորոցական առաջապահութիւն 90 | |
| 26. Թիւքական բանտերը. (Մար) | |

27. Ժազմակը ական օրէնքագլուռութիւնը դաշնակ Զալիցիրիսյում	3.
28. Ի՞՞նչ է ժազմակը ական թիւնը	40 50
29. Ի՞՞նչ է իրաւական պիտութիւն	2, 50
30. Ի՞՞նչ կարգիր են հարգաւոր ժազմակը	2
31. Ի՞՞նչ կարելի է լուծել հոգացին հարցը	2, 50
32. Ի՞՞մասովի միջիքութիւնները. (Բաֆֆի)	
33. Ի՞՞ուրամանել կարգիր	4, 50
34. Ի՞՞նչը և չալուէտալին. (Բաֆֆի)	
35. Կովկասիան վանդէտն	4
36. Կոյձեր Ա. և Բ. հաստոք. (Բաֆֆի)	2, 50
37. Կօսպերացիոն	
38. Հայորդիները Ա. և Բ. շարքեր	5
39. Հայուսաններ և Մակեդոնիա	
40. Հարուսաններ և ազքասաններ	3
41. Հայկական տանջանքները և Եւրապան	3
42. Համբերոշխութիւն հացի խնդիր	2
43. Հայուսաններ և Եւրապան	4, 25
44. Histoire des Anciens Arméniens	10
45. Ղարաբաղի տասնորդէտը թարգմ. (Բաֆֆի)	2, 50
46. Հոգ և կապիտալիզմ	50
47. Հոգացին հարցը Նոր Զելանտացյում	
48. Մարտական հրահանգներ	6
49. Մարկ Բոցարիս	2
50. Մեծ մարդասունին դէմ զատավարութիւն	3, 50
51. Մի զրոյց հոգի մասին	4
52. Մի քանի գլուխ հոյ - թրքական բնորհարմ.	2
53. Յիշողութիւններ մօտիկ անցեալից	2
54. Յեղափախականելիք	2
55. Յեղափախականելիք մորքեր	6
56. Յեղափախական գուշն	2
57. Եշարժիկներ Վահան Մանուէլիանի	9, 50
58. Նոր լիսան քարոզքը	50



59.	Նուզարակոն ծրագիրը .	2
60.	Ավ ինչով է ա զումը .	4 , 50
61.	Ասկի աքաղաղը .	16
62.	Պետական կողմանկերպու . հիմքերը որեմու .	2 , 50
63.	Պրոլետարիատը և աշխատավոր զիւզացիւ .	
	աթիւնը .	3
64.	Առաւել Մաւչի կոխները .	
65.	Առճմանագրութեան Էռթեան մասին .	4
66.	Առմաւել . (Բաֆֆի)	
67.	Աօցիալիդմը և աօցիալիկան չժ . 49րդ . զորում .	
68.	Աօցիալիստի համակիները .	6
69.	Վիտուի բազէն .	3
70.	Վիտուակարը .	4
71.	Վիտիկւեր և պատկերներ (Բաֆֆի)	
72.	Տնտեսական գորզացումը և աօցիալիդմը .	4 , 50
73.	Տնտեսագիտական զրոցներ .	4
74.	Փիլիսոփայ աօցիուուկ .	3
75.	Քաղաքական կոռուպցութիւններ թուշ .	
	առանձնում .	3
76.	Ցէպէլալիդմ և գէ նոկրատիվմ .	5
77.	Ֆրանսիական մած յեզուիտաւթիւնը .	4



